

ԱԶԳԻ ԼՈՒՍԱԻՈՐՈՒԹԵԱՄԲ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ
ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՐՊԷՍ
«ԲԱԶՄԱՎԷՊ»Ի ՊԱՏՄԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ

Մարդու մը իր ազգին լուսաւորութեան
ու յառաջադիմութեանը համար աշխատե-
լէն աւելի գեղեցիկ ու վսեմ ի՞նչ դիտա-
ւորութիւն կրնայ ըլլալ:

«Բազմավէպ» (1844, Յառաջաբան)

1859ի Յուլիսին «Westminster Review» պարբերականում լոյս
է տեսել Հ. Սպենսերի «What knowledge is of Most Worth?» յօդուածը,
որում առաջ է քաշուել հետեւեալ գաղափարը՝ կրթութեան ար-
ժէքը պայմանաւորուած է նրա գործնական օգտակարութեամբ:
Դրական փիլիսոփայութեան առաջին բոյլի ներկայացուցիչ Հ. Ս-
պենսերի գաղափարը առ այսօր պահպանել է իր արդիականու-
թիւնը, ինչը վտանգում է ազգի/ազգերի ինքնութիւնը: Այդ գա-
ղափարները չեն նպաստում հոգեմտաւոր միջավայրի ստեղծմա-
նը, որտեղ միայն կարող են լուծուել ազգի/ազգերի առջեւ ծա-
ռացած խնդիրները: Այդ իսկ պատճառով արդարացի է թուում
«լուսաւորութիւն» հասկացութեան իրաւունքի վերականգնման
հրամայականը, քանզի այն ենթադրում է նախ հոգու «ձևաւո-
րումը», անձի (ազգի) հոգեւոր զարգացումը: Միայն այս դէպ-
քում կրթութիւնը կարող է կենսագործել իր առաքելութիւնը,
այն է՝ ազգային մշակոյթի պահպանումը: Կրթահամակարգը ազ-
գային մշակոյթի առանձնայատուկ ենթահամակարգ է եւ իր
էութեամբ՝ պահպանողական: Այն արդիականացնում է անցեալն
ու պահպանում նրա արժէքը, ապահովում սերունդների ժառան-
գականութիւնն ու ազգի ինքնատիպութիւնը: Ազգի եւ ազգային
պետութեան զարգացումը պայմանաւորուած է հասարակութեան
մշակութային ինքնագիտակցութեան պահպանմանն ու զարգաց-
մանը միտուած ազգային լուսաւորութեամբ:

Այս տեսակետից հետաքրքրական է հայ ազգի հոգեմտաւոր զարգացման եւ ազգային մշակոյթի պահպանմանն ու արժեւորմանն ուղղորդուած «Բազմալեզ»ի պատմական առաքելութեան իմաստաւորումը:

* * *

Պատմութեան ըմբռնումը բացայայտում է հետեւեալ օրինանշափութիւնը. աւանդական (էթնիկ) հէնքի վրայ ստեղծուող մշակութային որոշակի (գրաւոր) աւանդոյթում մարդու ներառման գլխաւոր կառոյցը կրթահամակարգն է, ինչից եւ առաջանում է իւրաքանչիւր ազգի մշակոյթը: Մշակոյթը (գաղափարախօսութիւնը) ապահովում է ազգի ձեւաւորման, զարգացման ու անկախ գոյութեան նախապայմանը՝ հոգեւոր ինքնատիպութեան գիտակցումը: Այն պայմանաւորուած է մշակութային միասեռութեամբ, ինչը բացառապէս կրթութեան միջոցով է ձեռք բերւում: Ուստի կրթահամակարգը ազգային մշակոյթի կարեւորագոյն հաստատութիւնն է, ազգի եւ ազգային պետականութեան ձեւաւորման եւ պահպանման խթանը:

Այդ իրողութիւնը յստակօրէն գիտակցուել է դեռեւս հին քաղաքակրթութիւններ ստեղծած ժողովուրդների, այդ թւում նաեւ՝ հին հայերի կողմից: Քրիստոնէական շրջանում Հայոց գրերի ստեղծման արդիւնքում ձեւաւորուած Ազգային դպրոցը կոչուած էր Հայ եկեղեցու հետ մէկտեղ ապահովել ազգի հոգեւոր ինքնատիպութիւնը, դրանով իսկ նպաստելով նաեւ ազգի պատմական հեռանկարում ազգի ազատ գոյութեան նախապայմանի՝ ազգային պետականութեան ստեղծմանը: Միաժամանակ պետութեան կայացման եւ կենսագործունէութեան չափանիշը նոյնպէս ժողովրդի կրթութեան մասին է: Ազգային զգացմունքները, ազգային ինքնագիտակցութիւնը եւ ինքնաճանաչումը պետականութեան ձգտումների հիմքն են, որն, իր հերթին, կախուած է ազգային կրթութեան խնդրի լուծման մակարդակից:

Հասարակական (քաղաքակրթական) կեանքի համար արտաժամանակային եւ համընդգրկուն կրթութեան հիմնախնդրի նման ըմբռնմամբ է պայմանաւորելի հայ ազգային ինքնագիտակցութեան բարձր մակարդակը նշանաւորող Ե.-Զ. դարերի Հայ լուսաւորական շարժումը: Այդ ժամանակաշրջանում հայ ժողովրդի հոգեւոր զարգացման շարժնթացը պայմանաւորուած էր ուսում-

նալուսաւորչական եւ գրական ստեղծագործական գործունէութեամբ, որում առանձնակի նշանակութիւն ունէր Աստուածաշնչն-չի թարգմանութիւնը: Հայոց կաթողիկոս Սահակ Պարթեւի եւ վարդապետ Մեսրոպ Մաշտոցի ստեղծած հին հայ թարգմանչական դպրոցում բաւական կարճ ժամանակամիջոցում թարգմանուել են կրօնական բովանդակութիւն ունեցող աշխատութիւններ՝ ըստ քրիստոնէական գիտութեան եւ դպրութեան այդ ժամանակաշրջանում տարածուած դասակարգման: Այդ գործունէութեան արդիւնքում ստեղծուել է հարուստ եկեղեցական-աստուածաբանական գրականութիւն, որն առ այսօր իր արժանի տեղն է զբաղեցնում հայ ազգային մշակոյթի հարուստ շտեմարանում: Միւս կողմից յունաբան դպրոցի եռանդուն գործունէութեան շնորհիւ թարգմանուել են անտիկ շրջանի աշխարհիկ գրականութեան եւ գիտութեան գլուխգործոցներ (Պլատոն, Արիստոտէլ, Պորփիր), մշակուել է (այդ թարգմանութիւնները հնարաւոր դարձնելու նպատակով) անհրաժեշտ գիտական եզրութաբանութիւն: Այդ հէնքի վրայ գրուեցին ինքնօրինակ գիտական-փիլիսոփայական աշխատութիւններ: Յունաբան դպրոցի գործունէութիւնը պսակւում է գիտութիւնների՝ Դաւիթ Անյաղթի դասակարգման ստեղծմամբ: Համակարգելով իր ժամանակի գիտելիքի բոլոր ճիւղերը, Դաւիթ Անյաղթը ստեղծեց գիտութիւնների ուրոյն մի դասակարգում, որ դրուել է միջնադարեան կրթութեան հիմքում: Ե.-Զ. դարերի ազգային մշակոյթի ներքին տրամաբանութիւնը վերարտադրւում է կրթահամակարգում՝ ազգային-մշակութային աւանդութի մէջ հայ ժողովրդի ներգրման գլխաւոր կառուցակարգում:

Հոգեմտաւոր այդ հզօր շարժման արդիւնքում ձեւաւորուած հարուստ ազգային մշակոյթը դարեր շարունակ (ազգային պետականութեան չզոյլութեան պայմաններում) «աշխատել» է որպէս ազգի ինքնապաշտպանութեան հզօր հոգեւոր կառույց:

Նոր ժամանակաշրջանում (սկսած ԺԸ. դարից) Մխիթարեան միաբանութիւնը շարունակում է Ե.-Զ. դարերի ստեղծուած ազգային-մշակութային աւանդոյթը, ապահովելով ազգային մշակոյթի զարգացման օրինաչափ ընթացքը: Միաժամանակ նրանք ձգտում էին հայ ժողովրդին հաղորդակից դարձնել եւրոպական քաղաքակրթութեանը ազգային մշակութային հէնքի վրայ, այդ գործընթացի մէջ տեսնելով ազգի գոյութեան եւ հետագայ զարգացման խթանը: Ուստի արդարացի է լուծւում այն պնդումը, որ հայ լուսաւորական շարժման՝ նոր ժամանակաշրջա-

նի ազգային գաղափարախօսութեան ձեւաւորման եւ զարգացման նախադրեալները սկիզբ են առնում Մխիթարեան միաբանութեան շրջանակներում¹:

Յատկանշական է, որ հայ ազգի հոգեբարոյական եւ մտաւոր վերածննդի («Ջարթօմբ») Մխիթար Սեբաստացու Ծրագիրը բովանդակում է նոյն ազգի ստեղծած բարձր մշակոյթի բոլոր այն ձեւերը, որոնց մէջ դարեր շարունակ իրականացուել է նրա կենսագործունէութիւնը: Ընդ որում ազգի պատմական տարածութիւնը «սահմանող», հետեւաբար նաեւ՝ նրա ինքնատիպութիւնն ապահովող այդ ձեւերը իմաստաւորւում են աշխարհայեացքային նոր կողմորոշումների եւ ժամանակի հրամայականների լոյսի ներքոյ: Երկրորդ Հայ լուսաւորական շարժման խորքային հիմքերի պահպանման ու հայ ազգի հոգեմտաւոր առաջադիմութեան ապահովման միտումով կազմուած Մխիթարի Ծրագիրը բովանդակում է մշակութաստեղծ ձեւերը նշանաւորող հետեւեալ բաժինները.

- «1. Լեզուական վերանորոգում.
2. Պատմագրութիւն — հնախօսութիւն.
3. Կրօնական-ծիսական-հայրախօսական-բարոյական աշխատանք.
4. Հրատարակութիւն նախնեաց գործերու.
5. Դասական գրականութեան շարժում.
6. Աշխարհաբար լեզուի յայտնութիւն եւ գործածութիւն.
7. Հայ քատրոն.
8. Կրթական-դպրոցական ասպարէզ.
9. Գեղարուեստական-ֆարսիգագրական հրատարակութիւններ.
10. Սք. Ղազարի Հիմնարկութիւն Մխիթարեան Ակադեմիայի (Կաճառ)»².

Յատկանշական է, որ ազգային ինքնագիտակցութեան «արքնացման» եւ զարգացման նպատակով Մխիթարեաններն օգտագործում են ինչպէս աւանդական, այնպէս էլ ժամանակաշրջանին յատուկ կառուցակարգեր, որոնց թուում նաեւ՝ պարբերական մամուլը: Հայալեզու պարբերական մամուլը Մխիթարեանները

1 ՄԻՐՈՒՄԵԱՆ, Ռ., Ազգային լուսաւորութիւնը որպէս ազգային գաղափարախօսութեան գերիմղիկ Մխիթարեանների հայեացքներում (մեքոդաքամական տեսանկիւններ), Ի Բագմավէյ, 2001, թիւ 1-4, 232:

2 ՊՁՏԻԿԵԱՆ, Հ. Յ., Մխիթար վրդ. Սեբաստացիի եւ Մխիթարեաններում նպաստը հայ մշակոյթին, Երեւան 2003, 6:

դիտարկում են հայ ազգի լուսաւորութեան տեղեկատուական հզօրագոյն միջոց՝ այն դարձնելով ազգային կեցութեան համար հրատապ գաղափարախօսական հիմնահարցերի ձեւակերպման եւ քննարկման բարձր ամբիոնի:

Պատմական այդ վեհ առաքելութիւնը «վերապահուել» է 1843 թուականից առ այսօր լոյս տեսնող «Բազմավէպ» հանդէսին, որի հիմնադիրն ու առաջին խմբագիրը (մինչեւ 1848) Միաբանութեան ակնառու ներկայացուցիչ Հայր Գաբրիէլ Այվազեանն էր: Վերջինիս նախաձեռնութեամբ «Բազմավէպ» հանդէսի հրատարակումը մի նոր դարագլուխ է կազմել ոչ միայն հայ մամուլի, այլեւ հայ հոգեւոր մշակոյթի պատմութեան մէջ:

«Բազմավէպ»ը լիբրալ իրաւունքով ձեռք է բերել հայ պարբերական մամուլի «նահապետի» եւ ամենաներկարակեաց հայալեզու պարբերական հրատարակութեան կարգավիճակ: Դեռեւս 1902ին, երբ «Բազմավէպ»ը մտել էր իր գոյութեան վաթսուամեայ շրջանի մէջ, այդտեղ հրատարակուած իր յօդուածում Հ. Ս. Երեմեանը նշում է, թէ պարբերականի հիմնադրի եւ նրան աջակցող վեհնետիկի երիտասարդ արեղաների ողջ ջանքերի նւաւաւան էր հայ ազգին «հաղորդել Եւրոպայի յառաջադիմութիւնը, եւ նոյն շաւղէն յառաջ վարել նաեւ այն ազգը որուն մտքին համար նուիրուած էր ամէն Միքայելեան գրիչ: «Բազմավէպ» լոյս կը տեսնայ հոյս ծրագրով մը, անոր մէջ ամփոփուած էր գիտութիւնը իր ամէն միւղերով, արհեստները, գիւղական եւ տնտեսական ուսմունք, տիեզերական ծանօթութիւնք, հայ եւ օտար ազգի պատմութիւն եւ գրականութիւն, աշխարհագրական եւ քաղաքական տեղեկութիւններ, մանրալուրճ եւ վէպեր. այս ամէնը կը տեսնուին «Բազմավէպ»ի մախիկն հատորներու մէջ: Այդ ամէն միւղ կ'աւանդուի ռամիկներու հասկանալի եւ մատչելի լեզուով մը»³:

«Բազմավէպ»ի նշանաբանն էր Հ. Գ. Այվազեանի՝ «Ժողովրդեան օգտակար ըլլալս» գաղափարը: Հ. Ս. Երեմեանի հաւաստմամբ «Գ. Այվազովսկի իր գաղափարը ձեռնհասօրէն կ'իրագործէ»⁴:

«Բազմավէպ»ի խմբագրապետի նախագծած ուղին շարունակեցին նրա տաղանդաշատ աշակերտները (Հ. Հմայեակ Պապիկեան, Հ. Գարեգին Զարբհանյան), որոնց թուում նաեւ «Հայ քերթի մահապետի» տիտղոսին արժանացած Գ. Այվազեանի ամե-

3 ԵՐԵՄԵԱՆ, Հ. Ս., Բազմավէպ եւ խմբագիրներն, ի Բազմավէպ, 1902, թիւ Ե., 203:

4 Անդ, 204:

նահամբաւաւոր աշակերտն ու «Բագմավէպ»ի խմբագրապետի պաշտօնում նրան յաջորդած Հ. Ղեւոնդ Աւիշանը (1848-1851):

Ուստի արդարացի է թուում այն պնդումը, թե «Բագմավէպ» պարբերականի բովանդակութիւնը՝ սկսած առաջին իսկ համարից, ներկայացնում է մի ամբողջական իմաստային դաշտ, որում ազգային ինքնաճանաչման հրամայականով պայմանաւորուած՝ վերագնահատւում են ազգային դարաւոր մշակոյթի արժէքները եւ հոգեւոր այդ հէնքի վրայ ճշգրտւում ազգի ներկան ու սահմանւում նրա ապագան: Կարելի է ասել, որ մէկ ու կէս դարից աւել «Բագմավէպ»ի ամէն տարուայ հատորը ներկայացնում է Մխիթար Սեբաստացու Ծրագրի մանրակերտը⁵:

Այսպէս, Մխիթար Սեբաստացու Ծրագրում գրանցուած երկու կէտերը («Լեզուական վերանորոգում» եւ «Աշխարհաբար լեզուի յայտնութիւն եւ գործածութիւն») «Բագմավէպ»ում միատեղւում են առ այսօր ազգային կեցութեան համար խիստ կարեւոր «գրաբար-աշխարհաբար» յարաբերակցութեան հիմնահարցի մէջ:

Վերջինիս շեշտադրման կարեւորութիւնը պայմանաւորուած է նրանով, որ ազգային լեզուն անհատական գիտակցութեան եւ մշակութային աւանդոյթի (որ ազգային է՝ ըստ էութեան) առարկայացման ու զրանց միջեւ խորքային կապն ապահովող միակ միջոցն է: Ազգերի մշակութային կեանքի նշուած օրինաւորութիւնը համալսարանական է Մխիթար Սեբաստացու լեզուական քաղաքականութեան խորհուրդը բացայայտող իրեն իսկ ձեւակերպած սկզբունքին՝ առանց լեզուական վերանորոգութեան գրական վերածնունդ չի կարող լինել, մինչդեռ ազգի առաջադիմութիւնը նրա գրականութիւնից է սկսւում: Այս սկզբունքը Սեբաստացիին կենսագործում է երկու հեղինակային («Դուռն Բերականութեան Աշխարհաբար Լեզուին Հայոց», Վենետիկ, 1727 եւ «Քերականութիւն Գրաբար Լեզուի Հայկազեան Սեռի», Վենետիկ, 1730) աշխատութիւնների մէջ:

Մխիթարի նախորդած այս յարացոյցն «աշխատում» է նաեւ «Բագմավէպ»ում: 1843ի հանդէսի առաջին խմբագրապետ Հ. Գ. Այվազեանը հաստատում է գրաբարի պահպանման ու ճշգրտման, ինչպէս նաեւ աշխարհաբարի ձեւաւորման ու զարգացման

5 ՄԻՐՈՒՄԵԱՆ, Ռ. Ա., «Բագմավէպ»ը որպէս Ազգային «Զարթօնք»ի խորհրդանիշ (հայ ազգային իմքնութեան հարցի շուրջ), ի Լրաբեր Հայ-Ռուսական համալսարանի, (սերիա. Հումանիտար և հասարակական գիտութիւններ), ՀՌՀ հրատ., Երեւան 2018, թիւ 1, 69-79:

անհրաժեշտութիւնը. «... մեր միտքը ոչ միայն գրաբար լեզունիս ետ ձգել, կամ աշխարհաբարը գրոց լեզու դարձնել չէ, հապա ընդ հակառակն՝ գրաբարը դիւրաւ ծաղկեցընելուն հնարքը գտնել ու սորվեցընել է. ինչպէս որ յայտնի կ'երեւնայ նաեւ ան պայմաններէն որ ընտրելի աշխարհաբարին հարկաւոր սեպեցինք: Հիմա, հոնտեղը ըրած խոստմունքնիս կատարելու համար՝ քիչ մը աւելի քացատրեմք մեր նոյն կարծիքը: Ընտրելի աշխարհաբարը ան ատեն ազնիւ կ'ըլլայ ըստ կարի, եւ շատին համոյ, շատին ալ՝ դիւրաւ հասկընալի, երբոր արդէն գրաբարի մօտեցած ըլլայ ուրիշներէն աւելի, ու ասկէ ետքն ալ աւելի մօտեցաւ վրայ ըլլայ. այնպէս որ առանց իմացունելու, այսինքն առանց մեծ դժուարութեան, գրաբար լեզուին հետ միանայ»⁶:

Նոյն միտումը նկատելի է մինչեւ ԺԹ. դարի վերջը. «Հայտնիքնն ու հայ լեզուն՝ իւր զարգացման այն դարուն մէջ միայն պիտի կարենայ ինքզինքն անկարօտ համարել դասական լեզուին, երբ կարող լինի գերազանցել Ե. դարը. այլ այս բանս թէւ կարելի՛ բայց դեռ շատ հեռի է»⁷: *ԺԹ. դարի վերջին տարիներին Հ. Բարսեղ Սարգիսեանի ձեւակերպած այս միտքն այսօր իսկ խիստ արդիական է հայ հոգեւոր կեանքի համար*:

Այսպէս, եթէ գրական աշխարհաբարի առաջին կազմողի առաքելութիւնը ստանձնել է Մխիթար Սեբաստացին, ապա «Բագմավէպ»ը մեծապէս նպաստել է աշխարհաբարի զարգացմանը: Հ. Յարութիւն Պատիկեանի պնդմամբ. «Աշխարհաբարի ծաւալումին եւ ընդհանրացումին մեծապէս նպաստած է նաեւ Միաբանութեան պաշտօնաբերք «Բագմավէպ»ը, հիմնուած 1843ին, կը շարունակէ, որպէս նահապետը հայ մամուլին, ամէնէն գիտակից մղիչը ըլլալ աշխարհաբարի զարգացումին եւ մաքրութեան»⁸: Աւելի լայն համատեքստում այդ միտումը բնորոշում է Հ. Մեսրոպ Ժանաչեանը. «Այն միեւնոյն վարդապետները որոնք գրաբարի մեծ վարպետներ էին միանգամայն, եւ որոնք լայն հմտութիւն ամբարած էին մատենագիտական, պատմական, լեզուական՝ կը մանրեն հիմա ի-

6 ԱՅՎԱԶԵԱՆ, Հ. Գ., *Աշխարհաբար լեզուի վրայ, ի Բագմավէպ, 1843, քիւ ժ.*, 108:

7 ՍԱՐԳԻՍԵԱՆ, Հ. Բ., *Աշխարհաբարը գրաբարի ձեռնով զարգացնելու եւ կանոնաւորելու եւ գրաբար լեզուն աշխարհաբարի մէջ կենդանացնելու «խնդրին», ի Բագմավէպ, ԽԸ (1890), քիւ 3 (Մարտ), 81-89:*

8 ՊԶՏԻԿԵԱՆ, Հ. Յ., *Միտքար վրդ. Սեբաստացի եւ Միաբաններուն նպաստը հայ մշակոյթին, Երեւան 2005, 35-36:*

րենց գիտութիւնը, կը դիւրացնեն ու ճաշակելի կը դարձնեն անվարժ բերաններու խանդակաթ մօր մը պէս մեր ազգային պատմութիւնը, մատենագրութիւնը ու գեղարուեստը: Ո՛րքան իմաստութիւն կայ միայն այս կերպին ու գաղափարին մէջ, ո՛րքան ազգասիրութիւն իրենց ձեռնարկին մէջ, ո՛րքան գոհողութեան հոգի՝ յանձն առնելու համար այդպիսի մտաւորական աշխատութիւններ: Եւ փոխարէն այս ամէնուն՝ իրենց միակ վարձատրութիւնն ու ակնկալութիւնն էր այն յոյսն ու վստահութիւնը՝ թէ ազգը կ'օգտուի, կը զարգանայ⁹:

Մշակութային այս հաստատունն հիմքի վրայ «Բազմավեպ»ում գետեղուած նիւթը բաշխուել է ըստ նորաեւրոպական գիտութիւնների դասակարգման սկզբունքի:

1. Բնական գիտութիւն (աստղաբաշխութիւն, քնարանութիւն, քնալուծութիւն, երկրաբանութիւն, քնական պատմութիւն):
2. Տնտեսական գիտութիւն (ֆաղափական տնտեսութիւն, երկրագործութիւն, դաստիարակութիւն, տնական տնտեսութիւն):
3. Բանասիրական գիտելիք (ազգային պատմութիւն, ազգային դպրութիւն, բարոյական, աշխարհագրութիւն):

Ազգային մշակութային դաշտ եւրոպական քաղաքակրթական յարացոյցի ներմուծումը նպաստել է հայ ազգի ինքնագիտակցութեան (ինքնաճանաչման) զարգացմանը, ինչն էլ, ըստ հոլթեան, ցանկացած ազգի լուսաւորութեան (կրթութեան եւ դաստիարակութեան) գերխնդիրն է: Այսօր «Բազմավեպ»ը շարունակում է իրագործել պատմական իր վսեմ առաքելութիւնը՝ հանդիսանալով «Սփիւռֆ-Հայրենիք» մշակութային կապի ապահովման հզօրագոյն կառուցակարգ:

ՌԻՄԱ ՄԻՐՈՒՄԵԱՆ

9 ՃԱՆԱՇԵԱՆ Հ. Մ., «Բազմավեպ»ի առաջին դարադարձը. 1843-1943, Ի Բազմավեպ, 1943, թիւ 1-6, 5:

Summary

THE DEVELOPMENT OF THE ARMENIAN NATIONAL SELF-AWARENESS THROUGH THE ENLIGHTENMENT OF THE NATION AS A HISTORICAL MISSION OF “BAZMAVEP”

RIMA MIRUMYAN

A cultural history of every nation is highly influenced by periodicals, which are a spiritual and intellectual expression of the nation and, at the same time, a reflection of its spiritual inquiries at every historical stage of its development. Periodicals acquire special significance for the national community, especially in its critical historical periods, when it becomes necessary to consolidate the spiritual potential of the whole nation in order to preserve its identity and ensure its existence in the space of History.

In the Armenian cultural history, that rightful place is occupied by “Bazmavep”, the review published by the Mechitarist Congregation, and the patriarch of the Armenian (and not only Armenian) periodical press.

Bazmavep was (and continues to be) a spiritual bridge that connected the divided parts of the Armenian nation, the ancient and modern history of Armenia, preserving and transmitting Armenian national cultural traditions, insuring a link between the Armenian and European civilizational paradigms. The consistent policy conducted for already 175 years by the editors of “Bazmavep” in the direction of preservation of Armenian cultural values has become a powerful mechanism for the implementation of the nation’s spiritual revival program of Mkhitar Sebastatsi, founder of the Mechitarist Congregation, aimed at restoring Armenian civilizational paradigm and preserving the Armenian national identity.